ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 06 » նոյեմբեր 2024թ. No 6083 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 47-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման EL/01/2819-24 առ 01.11.2024թ փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել թվով 3 դեղի գրանցման հավաստագրերի ժամկետի երկարաձգումը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Բաղրյանին՝

1)Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2)Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի հավաստագրի ժամկետի երկարաձգման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի նոյեմբերի « 06 » - ի N6083 - Ա հրամանի

Գրանցման հավաստագրի ժամկետի երկարաձգման դեղերի ցանկ համաձայն ՀՀ կառավարության N 162-Ն առ 28.02.2019 որոշման

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ԱՑՑ 200մգ Տաք Ըմպելիք | ացետիլցիստեին | դեղափոշի ներքին ընդունման լուծույթի | 200մգ; (20) փաթեթիկներ 3գ | Սալուտաս Ֆարմա ԳմբՀ, Օտտ-վոն-Գուրիկե-Ալե-1, 39179 Բարլեբեն- բաց թողնման հսկող, Լինդոֆարմ ԳմբՀ, Նեուշտրասե 82, 40721, Հիլդեն, Նորդրեին-Վեստֆալեն, Գերմանիա- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող (ֆիզիկոքիմիական), ԻՄՔ - Ինստիտուտ ֆուր միկրոբիոլոջիսչե Քուալիտատսիչերունգ ԳմբՀ , Բենինգհոֆեր Վեգ 2, Մեթման, 40822, Գերմանիա- որակի հսկող (մանրէաբանական) | Գերմանիա | Սանդոզ Ֆարմասյութիքալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա | Սլովենիա | ԱԴ | 22455 31.10.2024 |
| 2 | ԱՐՄԵՆԻԿՈՒՄ | յոդ, կալիումի յոդիդ, լիթիումի քլորիդ, պոլիվինիլային սպիրտ, դեքստրին, նատրիումի քլորիդ | դեղապատիճներ | 28,76մգ+43,14մգ+0,72մգ+10,79մգ+359,53մգ+32,36մգ; (40/4x10/) բլիստերում | Արփիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, 2204, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, տուն 19 | Հայաստանի Հանրապետություն | Արմենիկում+ ՓԲԸ, Նալբանդյան փ. 37, 0001 Երևան | Հայաստանի Հանրապետություն | Դ | 22456 31.10.2024 |
| 3 | ԱՑՑ 200 | ացետիլցիստեին | դեղահատեր դյուրալույծ | 200մգ; (20) պլաստիկե տարայում | Սալուտաս Ֆարմա ԳմբՀ, Օտտ-վոն-Գուրիկե-Ալե-1, 39179 Բարլեբեն- բաց թողնման հսկող, Հերմես Ֆարմա Գես.մ.բ.Հ., Սչվիմսչուլվեգ 1ա, 9400 Վոլֆսբերգ, Ավստրիա- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող | Գերմանիա | Սանդոզ Ֆարմասյուտիքալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա | Սլովենիա | ԱԴ | 22457 31.10.2024 |